ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԱՆԼՍՏԻՐ ՆՎԻՐՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆԸ
(պրոֆ. Մակիչ Արզումանյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Մակիչ Արզումանյանին մտաբերելիս հաճելի զգացում ես ապրում, որ տարիներ շարունակ չփվել ես այդ հրաշալի մարդուն, ամեն անգամ հաճույք զգացել նրա հետ ունեցած հանդիպումներից: Խորապես ցավում ես, որ նա մեզ հետ չէ: Տարիներն անցնում են, բայց բնավ չի թուլանում մեր ափսոսանքը:

Մեզնից հեռանալով՝ Մակիչ Արզումանյանս իր հետևից թողեց լուսավոր մի գիծ, իր բարի անունը, որն իր կենդանության օրոք արդեն հոմանիշ էր քաղաքացիական պարկեշտության:

Բազմակողմանի պատրաստություն, լայն աշխարհայացք, տարբերակող միտք, անսասան բարոյական սկզբունքներ, անկաշառ հոգի, անխտիր նվիրում ծրագրած նպատակին. հատկանիշներ, որոնց շնորհիվ նա արժանի տեղ գրավեց սերնդակիցների շարքում՝ իբրև գիտնական, մանկավարժ, իբրև մարդ:

Նա ուներ ընդդիմախոսներ՝ գերազանցապես գաղափարական հողի վրա, բայց չուներ կամ համարյա չուներ անձնական հակառակորդներ, առավել ևս՝ արհամարհողներ:

Լինելով ընդառաջող, միշտ բարին ցանկանալով, նա, սակայն, անհանդուրժող էր միայն մի դեպքում՝ չէր կարողանում տանել տգիտությունը և դրա կրողներին:

Մեծ է Մ. Արզումանյանի ծառայությունը պատմական գիտությանը: Նրա ուսումնասիրությունները ոչ միայն բազմակողմանի հարուստ գիտելիքների ու լայն էրուդիցիայի արդյունք են, այլև անսպառ եռանդի, տաժանելի ու անդուլ աշխատանքի արդյունք: Նշանավոր գիտնականը հեղինակ էր ավելի քան 20 գրքերի, համահեղինակ՝ մի շարք կոլեկտիվ աշխատությունների, ժողովածուներում, հանդեսներում ու թերթերում տպագրել է շուրջ 300 հոդված: Մ.Արզումանյանի աշխատություններին ամենից առաջ բնորոշ է վավերագրական ամուր հենքը: Առանց բավարար փաստաղրության և առանց համոզիչ հիմնավորվածության, պատմաբանը դատողություններ ու եզրահանգումներ չէր անում: Երկրորդ, Հայաստանի, Վրաստանի, Մոսկվայի, Լենինգրադի և ուրիշ տեղերի արխիվներին քաջածանոթ պատմաբանը առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել մեծ թվով արժեքավոր վավերագրեր և այլ կարգի փաստաթղթեր: Նրան գիտական ժառանգությունն անխոցելի է փաստական նյութի առումով: Երրորդ, Մ.Արզումանյանը խորապես ուսումնասիրել է ժամանակի մամուլը, նրա աշխատություններում լայնորեն օգտագործված են մամուլից քաղված բազմաբնույթ նյութեր: Բնութագրական է նաև, որ գիտնականի հրապարակումներում համեմատաբար քիչ են կրականությունից արված քաղվածքները: Նա գտնում էր, որ պատմաբանը պարտավոր է իր սեփական խոսքն ասել, այլ ոչ թե կրկնել ուրիշներին: Չորրորդ, անհամար փաստերի քաոսից գիտնականը կարողանում էր ընտրել ու

առանձնացնել երևույթներն ու դեպքերը բացահայտող առավել տիպականն ու բնորոշը: Հինգերորդ, Հայաստան աշխարհում տեղի ունեցած պատմական իրադարձությունները Արզումանյանը դիտարկել է ժամանակի համաշխարհային իրադարձությունների շղթայի մեջ, որը նրան հնարավորություն էր տալիս լայնորեն դրսևորել իր ինտելեկտուալ մեծ կարողությունները:

Վեցերորդ, հակայական գիտելիքների տեր բարձրաճաշակ գիտնականը ինչպես խոսում էր, այնպես էլ անթերի շարադրում էր իր մտքերը:

Մ.Արզումանյանի ստեղծագործական ուղին ժամանակագրական առումով կարելի է բաժանել երկու հատվածի. առաջինն ընդգրկում է 1940 - 60-ական թվականները, երկրորդը՝ 1960-ական թվականների կեսերից մինչև կյանքի վերջին օրերը: Առաջին շրջանում պատմաբանի ստեղծագործական մտքի ոլորտում Անդրկովկասում հեղափոխական շարժումների և Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների պատմության հարցերն էին, դրանց գիտական լուսաբանումը: Ստեղծագործական ուղու երկրորդ շրջանը համընկնում է խրուշչովյան «ձնհալին» և դրա հետևանքով ստեղծված քաղաքական սահմանափակ ազատություններին, երբ գիտական միտքը հայտնի չափով ազատագրվեց գաղափարական կաշկանդիչ կաղապարներից, և հնարավորություն ստեղծեց գիտական արդյունավետ աշխատանքի համար:

Արժեքավոր են Մ.Արզումանյանի՝ ինչպես հեղափոխական շարժումներին, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների պատմությանը, բոլշևիկյան ակնառավոր գործիչների կյանքին ու գործունեությանը, այնպես էլ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին, ազատության համար նրա դարավոր մարտնչումներին նվիրված աշխատությունները:

Ստեղծագործական կյանքի այդ երկու փուլերն օրգանապես բխում են մեկը մյուսից, և դրանցում հակադրություն տեսնելն ավելորդ զբաղմունք է: Երկու դեպքում էլ պատմաբանի մտածումների կենտրոնում Հայաստան հայրենիքն էր, մայր ժողովուրդը: Խորհրդային կարգերը հայ ժողովրդին դուրս էին բերել ահավոր կացությունից և պայմաններ ստեղծել նրա գոյապահպանման ու զարգացման համար:

Ինչպես սոցիալիզմի համար հայ ժողովրդի մղած պայքարին, այնպես էլ նրա ազգային-ազատագրական շարժմանը նվիրված արզումանյանական աշխատությունները խիստ այժմեական են: Դրանք, ժամանակաշրջանի ստույգ վկայագրեր լինելով, միաժամանակ ուսուցանում են, որ իրավ հայ լինելը ոչ մի աղերս չունի ազգային լոզունգները շահարկող ժողովրդալյուն ունեցվածքի կողոպտիչների հետ: Այսպես, Ղարաբաղյան կռվի մեկնած հայրենասեր հայորդիների, իրենց կյանքը հայության մի հատվածի ազատագրությանը նվիրած հազարավոր երիտասարդների թիկունքում կողոպուտների և այլ հանցանքների հեղինակներն ընդմիշտ զրկված են բարոյական իրավունքից՝ խոսելու հայրենիքի ու հայրենասիրության մասին, խոսելու ժողովրդի անունից: Առավել ևս՝ սրբապղծություն են նրանց կողմից հայ ժողովրդի նվիրյալ զավակներին զրպարտելու փորձերը, որոնք անցել էին ցարական բանտերի ու աքսորների միջով, քեմալականների երախից փրկել հայության բեկորները, ստեղծել հայ ժողովրդի սոցիալիստական պետությունը՝ ապահով ու բարվոք կյանքով:

1959 թ. լույս ընծայվեց Մ.Արզումանյանի դոկտորական ատենախոսությունը, որը նվիրված էր Հայաստանի հեղափոխական շարժումներին և ընդգրկում էր 1907 - 1917 թթ. ժամանակաշրջանը[1]: Աշխատության հեղինակը լրացնում է պատմության բազմաթիվ սպիտակ էջեր, առաջին անգամ ընթերցող-

---

[1] Մ.Վ.Արզումանյան, Բոլշևիկների գործունեությունը և ուսոյյուդիոն շարժումը Հայաստանում 1907 -1917 թվականներին, Ե., 1959, 572 էջ:

ներին ներկայացնում անցյալի շատ իրողություններ: Նա ցույց է տալիս, որ ռուսահայությունն այդ տարիներին ոչ թե միայնակ ու անզոր մի զանգված էր, ինչպես պատկերացնում էին շատերը, այլ ակտիվ հավաքականություն, որի ընդերքում, չնայած ցարական դաժան հալածանքներին, դանդաղ, բայց հիմնավոր խմորվում էին ապագայի սոցիալական ցնցումները:

Հատկանշական է, որ արդեն իր այս առաջին ծավալուն մենագրության 8-րդ գլխում հեղինակը, խորհրդահայ պատմաբանների թվում առաջին անգամ, թեև համառոտ (27 էջի վրա), անդրադարձել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կողմից արևմտահայության նկատմամբ իրականացրած եղեռնին, ցույց տվել զանգվածային սարսափելի կոտորածների ու աքսորների պատճառները, իմպերիալիստական տերությունների մեղսակցությունը սպանդին և այլն: Աշխատության նշված գլխում առկա են Մեծ եղեռնին վերաբերող համարյա այն բոլոր հարցադրումները, որոնք հետագայում զարգացվելու էին հայ պատմաբանների կողմից:

Հեղափոխական պայքարի պատմության ընդհանուր թեմատիկայում առանձնանում է հայ հեղափոխական գործիչների կյանքին ու գործունեությանը նվիրված մատենաշարը, որն ընդգրկում է նշանավոր կոմունիստներ Ասքանազ Մռավյանի[2], Սարգիս Մուսայելյանի[3], Արսեն Ամիրյանի[4], Սուրեն Սպանդարյանի[5], կուսակցական և պետական ականավոր գործիչ Ստեփան Շահումյանի[6] կենսագրություններն ամբողջացնող 5 կարևոր մենագրություն:

Հայ ժողովրդի լուսավոր զավակ Ստեփան Շահումյանի մասին մինչ այդ գրվել էին մի շարք արժեքավոր աշխատություններ: Այդ գործում մեծ էր հատկապես տաղանդավոր պատմաբան, Խ.Բարսեղյանի ավանդը: Հանդես բերելով ստեղծագործական իր նոր մոտեցումները, Մ.Արզումանյանը ընթերցողին ներկայացրեց մի հիմնարար պատմագիտական աշխատություն, որը գրված էր նորովի և լիովին արժանի էր Ստեփան Շահումյանի մեծությանը:

1960-ական թվականների «ձնհալի» թարմ հովերն իրենց մեջ առան հասարակական մտքի ինտելեկտուալ թևի շատ ներկայացուցիչների, որոնց թվում էլ՝ Մ.Արզումանյանին: Նախորդ շրջանի աշխատություններում արդեն արտահայտված սոցիալ-հայրենասիրական մոտիվներն աստիճանաբար վերաճեցին համակարգված մի կուռ համակարգի: Գիտնականի միտքն ամբողջովին կլանվեց հայ ժողովրդի տգղային-ազատագրական պայքարի հարցերի մեջ: 1969թ. լույս տեսավ պատմաբանի «Հայաստան. 1914 – 1917» մեծածավալ (780 էջ) աշխատությունը[7], որն արժեքավոր ներդրում էր մեր պատմագրության մեջ: Հեղինակը նկարագրում է Հայաստանի արևելյան և արևմտյան մասերի պատկերն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, մերկացնում մեծ տերությունների երկդիմի քաղաքականությունը Հայկական հարցում, մանրամասն ցույց տալիս 1915 – 1916թթ. զարհուրելի դեպքերը: Իրադարձությունների ընդհանուր շղթայից նա առանձնացրել է առավել բնորոշները, իր միտքը կոնկրետացրել հենց դրանց վրա, կատարել այնպիսի կոահումներ, որոնք պատմաբանին մղում էին նոր որոնումների:

Պատմական իրադարձությունների լայն պաստառի վրա ներկայացնելով հայոց Մեծ եղեռնի սարսափները՝ Մակիչ Արզումանյանը, սակայն, չէր բաժանում այն հետազոտողների կարծիքը, որոնք 1915 թվականը համարում էին հայոց պատմության ամոթը: Նա ընթերցողին մտովի տեղափոխում է հայոց

---

[2] Մ.Արզումանյան, Ասքանազ Մռավյան. Կյանքի ու գործունեության համառոտ ուրվագիծ, Ե., 1955:

[3] Մ.Արզումանյան, Սարգիս Մուսայելյան, Ե., 1955:

[4] Մ.Արզումանյան, Արսեն Ամիրյան. Ժուռնալիստական-հրապարակախոսական գործունեության ակնարկ, Ե., 1961:

[5] Մ.Արզումանյան, Սուրեն Սպանդարյան, Ե., 1982:

[6] Մ.Արզումանյան, Ստեփան Շահումյան, Ե., 1978:

[7] Մ.Արզումանյան, Հայաստան. 1914 – 1917, Ե., 1969:

հերոսական դիմադրության վայրերը, ցույց տալիս Վանի, Նատախի, Նապին-Գարահիսարի, Ուրֆայի, Սուեդիայի և այլ տեղերի հերոսամարտերը:

Հարկ ենք համարում ավելացնել, որ առանձին դեպքերում գրքում կան ձգձգված տեղեր, որոշ դեպքերում էլ հեղինակը գործածում է հուզական ոճ, որն ըստ երևույթին գալիս է նյութի ողբերգական ու դրամատիկ էությունից, իսկ ամբողջության մեջ այդ նյութը մատուցվում է բարձր կուլտուրայով, կենդանի ու հստակ մտածողությամբ:

1973թ. Մ.Արզումանյանը լույս ընծայեց նոր մենագրություն՝ «Արհավիրքից վերածնունդ»[8] վերնագրով: Դրանով գինականը ամբողջացրել է այն մեծ պրոբլեմի ուսումնասիրությունը, որին նվիրել էր բազում տարիներ:

Այս աշխատությունը սկսում է հակիրճ, բայց բովանդակալից առաջաբանով, որտեղ ըստ էության ամփոփված է նրա գիտական ու քաղաքական հավատամքը: Հեղինակը սկզբից բնութագրում է «աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի՝ հայերի, անցած ուղին»: Միաժամանակ նա ընդգծում է հայ ժողովրդի մղած դասակարգային պայքարը սեփական հարստահարիչների դեմ, ինչպես նաև ցույց է տալիս, որ հայերի դիմանկարը հատկապես գծվել է ներքին կյանքով, տնտեսական ու կուլտուրական չինարարությամբ: Հեղինակն այստեղ ուշադրությունը բևեռել է հանգուցային խնդիրների վրա՝ միշտ ստեղծագործական մոտեցում ցուցաբերելով դրանց լուսաբանման ժամանակ: Այդպես է օրինակ՝ Բրեստի հաշտության կնքումը՝ կապված Անդրկովկասի և Հայաստանի հետ: Նման հանգամանալի քննություն չենք գտնում ուրիշ հեղինակների մոտ: Այդպիսին է նաև քեմալականություն-Հայաստան պրոբլեմը, որը ենթարկված է լայն ու խոր վերլուծության: Առանձին խորությամբ է տրված «միջազգային դիվանագիտությունը և Հայաստանը» հարցի քննական տեսությունը:

Մ.Արզումանյանը 1977թ. հրապարակում է իր առավել հետաքրքիր ու արժեքավոր գրքերից մեկը՝ «Նանսենը և Հայաստանը»[9]: Նորվեգացի մեծ հումանիստի մասին շատերն են գրել, բայց Մ.Արզումանյանն առաջին պատմաբանն էր, որ խոր ներշնչանքով ամբողջացրեց նրա անզուգական կերպարը: Հեղինակը, բնականաբար, ծանրացել է Ֆրիտյոֆ Նանսենի՝ իբրև հայ ժողովրդի մեծ բարեկամի կերպարի բացահայտման, նրա հայապաշտպան գործունեության վրա: Մ.Արզումանյանի գիրքն ըստ էության հայ ժողովրդի խոր երախտագիտության տուրքն է, նրա հավերժ չնորհակալությունը մարդկության այդ բարի հանճարին:

Գրքի վերջին էջերում հեղինակը այն միտքն է հայտնում, որ հայ ժողովուրդը վաղ թե ուշ Երևանում կանգնեցնելու է Ֆրիտյոֆ Նանսենի հուշարձանը՝ որպես նրա նկատմամբ հավերժ սիրո խորհրդանշան:

Պատմաբանի վերջին աշխատությունը (շուրջ 800 էջ ծավալով) լույս տեսավ 1989 թ. «Դարավոր գոյամարտ»[10] վերնագրով: Այս գիրքն, ըստ էության, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության դիտական լուսաբանման ուղղությամբ մեր պատմաբանների կատարած աշխատանքի ամբողջացում ու ամփոփումն է: Միաժամանակ, աշխատության մեջ պատմաքննական տեսանկյունով տրված են բազմաթիվ կարևոր հարցերի նոր լուծումներ:

Ականավոր գիտնականը կյանքից հեռացավ 1988թ. հուլիսին, երբ արդեն սկսվել էր Ղարաբաղյան ժողովրդական շարժումը: Նա գամված էր անկողնին, բայց հոգով ու մտածումներով ժողովրդի հետ էր, նրա կողքին:

Պրոֆ. Մակիչ Արզումանյանը սերունդներին թողեց իր դիտական մեծ վաստակը և բարի հիշատակը, որը թանկ է նաև մեզ՝ նրա բազում ընկերների ու բարեկամների համար:

Հ.Ռ.ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

---

[8] Մ.Արզումանյան,, Արհավիրքից վերածնունդ, Ե., 1973:
[9] Մ.Արզումանյան, Նանսենը և Հայաստանը, Ե., 1977:
[10] Մ.Արզումանյան, Դարավոր գոյամարտ, Ե., 1989: